



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ*

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես
մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և
դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ Կենսաբանություն

Հետազոտող ուսուցիչ՝ Լատիրա Ավինյան

Ուսումնական հաստատություն՝ Պ.Սևակի անվան թիվ 123
հիմնական դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	
1.1 Բնապահպանական կրթության և դաստիարակության էությունը, նպատակը և խնդիրները.....	5
1.2 Բնապահպանական կրթության և դաստիարակության իրականացման մեթոդները.....	8
ԳԼՈՒԽ 2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ	
2.1 Բնապահպանական կրթության և դաստիարակության բովանդակությունը հիմնական դպրոցում.....	11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	19
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի արդիականությունը: Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել Երկիր մոլորակի ամբողջականության և հավասարակշռության վերաբերյալ աշխարհայացք ունեցող քաղաքացու ձևավորումը, ով կգիտակցի, որ հասարակության կայուն զարգացման համար պետք է բնական էկոհամակարգի կայունություն, տնտեսության համաչափ զարգացում, համապատասխան սոցիալական պայմանների ապահովում: Դրան կարելի է հասնել, եթե որպես զենք օգտագործվի կրթությունը հանուն կայուն զարգացման, որը կապահովի հասարակության գոյատևումը, բնական պայմանների ու պաշարների արդյունավետ օգտագործումը, շրջակա միջավայրի որակի պահպանումը: Այդ կերպ էկոլոգիական մտածելակերպը կդառնա կենսակերպ և մշակույթ:

Բնապահպանական կրթության գլխավոր խնդիրը շրջակա միջավայրի բնապահպանությանն առնչվող հարցերի վերաբերյալ իրազեկության բարձրացումն է: Իրազեկության տեսանկյունից թիրախային խմբերը բազմազան են: Սակայն, դրանցից ամենակարևոր խմբերից են հիմնական դպրոցի աշակերտները, քանի որ նրանք են հանդիսանում երկրի ապագան կերտողները: Բնապահպանական տարբեր թեմաների անդրադառնալու միջավայր են հանդիսանում հիմնական դպրոցը, ինչպես նաև էկոակումբները:

Որպես բնապահպանական կրթության արդյունավետ ուսուցման կարևոր մեթոդ համարում ենք դասարանային պարապմունքների գույզահեռ կրթական միջոցառումների, ներառյալ էքսկուրսիաների, ճամբարների, դպրոցական խմբակների, շաբաթօրյակների, ծառատունկի և այլնի կազմակերպումը: Բարենպաստ եղանակին ուսուցիչը կարող է աշակերտների հետ ուսուցողական զրուսանք կատարել մոտակա գետ, լիճ, այգի, անտառ, գործարան կամ հանքավայր: Էքսկուրսիաների դերը կարևորվում է նրանով, որ աշակերտներն ամրապնդելով ստացած տեսական գիտելիքները՝ ձեռք են բերում նաև գործնական կարողություններ և հմտություններ:

Հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է ուսուցման գործընթացում նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմամբ սովորողների՝ բնապահպանական կրթության սոցիալական և կիրառական նշանակությամբ:

Հետազոտական աշխատանքի նպատակը: Հետազոտական աշխատանքի նպատակն է էկոլոգիական մշակույթի ձևավորումը, որն արտահայտվում է առողջության և շրջակա միջավայրի նկատմամբ երեխաների պատասխանատու վերաբերմունքով՝ հիմնված հասարակության մեջ ընդունված բարոյական և իրավական նորմերի պահպանման վրա:

Հետազոտական աշխատանքի խնդիրները: Հետազոտության նպատակին համապատասխան առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- 1) վերլուծել բնապահպանական կրթության և դաստիարակության էությունը, նպատակը և խնդիրները,
- 2) ներկայացնել բնապահպանական կրթության և դաստիարակության իրականացման մեթոդները,
- 3) ուսումնասիրել բնապահպանական կրթության բովանդակությունը հիմնական դպրոցում,
- 4) հետազոտական արդյունքների հիման վրա կատարել եզրակացություններ:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը կազմված է երկու գլխից, երեք ենթագլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1 Բնապահպանական կրթության և դաստիարակության էությունը, նպատակը և խնդիրները

Բնապահպանական գիտակցության զարգացումը հիմնական դպրոցի կարևոր խնդիրներից մեկն է, որը ձևավորում է բարոյական մշակույթ և անխուսափելիորեն անդրադառնում է անհատի բնապահպանական կրթության վրա: Այն նաև խթան է հանդիսանում բնապահպանական գիտակցության զարգացման համար:

Բնապահպանական կրթության ծրագիրը սովորողների համար հանդիսանում է կոնկրետ մարմնավորում, որը բնապահպանական դաստիարակության հետ կապված ուսումնական պրակտիկան է, որն իրականացվում է դպրոցներում: Բացի ծրագրի բովանդակության հիմնական հասկացություններից և արժեքներից, ներկայիս մոդելը արժեքավորվում է նաև առաջնային գործունեությամբ՝ կրթական վիճակ, լավագույն փորձ, տեխնիկա, մեթոդներ, տեխնոլոգիական առանձնահատկություններ:

Բնապահպանական կրթության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, որի կառուցվածքի հիմքը բնապահպանական գիտակցության զարգացումն է¹: Սա ենթադրում է, որ բարոյական և բնապահպանական սկզբունքները բնության կառավարման և խթանման գաղափարների օպտիմալացման, ակտիվ ուսումնասիրության արդյունք է: Ճիշտ օգտագործելով տարբեր ուսուցման մեթոդներ՝ դաստիարակում ենք էկոլոգիապես զրազետ և ազնվաբարո մարդ:

Բնապահպանական կրթության հիմնական նպատակը շրջակա միջավայրի համար պատասխանատու քաղաքացու դաստիարակությունն է, որի ուսուցման ժամանակ առաջ են քաշվում հետևյալ խնդիրները՝

1. կրթական

- գտնել շրջակա միջավայրի բնապահպանական խնդիրները և առաջադրել արդի լուծման ուղիներ,

¹ Ներկարարյան Ա., Էկոլոգիական կրթության և դաստիարակության միջոցները և ուղիները դպրոցում, Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու, թիվ 3, Երևան, 2003, էջ 234-337:

- ձևավորել էկոլոգիապես հասուն վարքով ու գործունեությամբ, առողջ ապրելակերպով անհատ,

2. զարգացնող

- մտավոր և գործնական հմտությունների ուսուցում, միջավայրի գնահատում և բարելավում, ակտիվ աշխատանքի և շրջակա միջավայրի պաշտպանության ձգտման ձևավորում:
- Խելացի (կարողանալ վերլուծել բնապահպանական իրավիճակներ), հուզական (վերաբերմունքը բնության հանդեպ՝ որպես համամարդկային արժեք), բարոյական (կամքն ու հաստատակամությունը, պատասխանատվությունը) քաղաքացու զարգացում:

Կազմակերպման յուրաքանչյուր ձև հիմնական դպրոցի սովորողների հետ ուսուցման գործընթացում խթան է հանդիսանում, զարգացնում տարբեր տեսակի ճանաչողական գործունեություններ: Այլ աղբյուրներից տեղեկությունները թույլ են տալիս կուտակել և բացահայտել խնդրի էությունը, ստեղծարարությունը, թույլ են տալիս, որպեսզի անհատը իրական ներդրում ունենա ուսումնասիրության և էկոհամակարգերի խթանման գործընթացում:

Երեխաները ստանում են հատուկ գիտելիքներ բույսերի և կենդանիների մասին դեռևս կրտսեր դպրոցում, որոնք խորացնում են 5-9-րդ դասարաններում: Սովորողներին պետք է ծանոթացնել իրական բնապահպանության առջև ծառայած խնդիրներին: Ուսումնասիրելով կենսաբանության առարկայից «էկոլոգիայի և բնապահպանության հիմունքները» բաժինը իր խորությամբ՝ անհրաժեշտ է զարգացնել միջառարկայական կապը կենսաբանություն և աշխարհագրություն առարկաների միջև, տալ ճիշտ ձևակերպում բնապահպանության, էկոլոգիական շղթայի (պարենային կապը օրգանիզմների), բնապահպանական, էկոլոգիական աղետների մասին: Դիմելով պատմության օգնությանը (հասարակություն-բնություն ներդաշնակ փոխազդեցությունը տեսականորեն հիմնավորելու համար), ուսուցիչը ներկայացնում է գիտական պատճառներ բնությունը պահպանելու, ինչպես կոնկրետ երկրի, այնպես էլ աշխարհի մակարդակով: Իմացական գործունեությունը խթանում են այնպիսի իրավիճակներ, երբ անհրաժեշտ է բարոյական որոշում կատարել, և այդ իրավիճակները նպաստում են սովորողների արժեհամակարգի ձևավորմանը:

Ակտիվանում է նաև ձգտումը՝ գեղագիտական զգացմունքները ստեղծագործական միջոցներով արտահայտելու (նկարչության, բանաստեղծության միջոցով): Արվեստին բնորոշ սինթետիկ մոտեցումը և զգայականությունը դեպի իրականությունը հատկապես կարևոր են բնության պահպանման շարժառիթները զարգացնելու համար:

Բնապահպանական կրթության և դաստիարակության նպատակն է աճող սերնդին ծանոթացնել բնության, շրջակա միջավայրի առանձնահատկություններին, պարզաբանել բնության կարևորագույն օրենքները և այն ուղիները, որոնց միջոցով կարելի է պահպանել ու վերարտադրել բնությունը: Անհրաժեշտ է մանկական տարիքից նպատակաուղղված ձևով դաստիարակել պատասխանատվություն շրջապատող միջավայրի նկատմամբ:

Դասական բանաձևմամբ՝ բնապահպանական դաստիարակությունն ու կրթությունն անհատի ձևավորման կարևորագույն բաղադրամասն են, որով անձը դաստիարակվում է շրջակա միջավայրի նկատմամբ ունեցած ճիշտ վերաբերմունքի պահանջներով²: Հատկապես մեր ժամանակներում հսկայական նշանակություն է ստանում աճող սերնդին բնության, շրջակա միջայրի պահպանման, խելացի օգտագործման, վերարտադրման բնական նորմերով դաստիարակումը, որպեսզի ապահովվի մարդկանց կենսագործունեությունը: Էկոլոգիական դաստիարակության ու կրթության կարևոր միջոց է ուսումնական հաստատություններում ուսումնական և արտաուսումնական համալիր միջոցառումների անցկացումը բուսական ու կենդանական աշխարհի, օդային, ջրային ավազանների պահպանության գործում: Կրթության և դաստիարակության ռազմավարական նպատակ պետք է լինի էկոլոգիական աշխարհայացքի ձևավորումը, որի հիմքում ընկած են էկոլոգիական գիտելիքները, կուլտուրան և էթիկան: Ընտանիքներում հարկավոր է երեխաների մեջ ըստ ամենայնի սեր սերմանել բնության հանդեպ, իսկ դպրոցում ուսումնասիրվող բոլոր առարկաներն անխտիր պետք է ներթափանցված լինեն էկոլոգիական գիտելիքներով:

² Մարուխյան Ո., Անձի էկոլոգիական կուլտուրան: Ձևավորման ուղիները և դաստիարակության ու կրթության միջոցները, Երևան, Արևիկ, 2005, էջ 292:

1.2 Բնապահպանական կրթության և դաստիարակության

իրականացման մեթոդները

Հիմնական դպրոցում բնապահպանական կրթությունն իրականացվում է երկու անբաժանելի ձևերով՝ տեսական և գործնական: Կյանքի գոյությունը հիմնված է բնության օրենքների վրա, որոնց ուսումնասիրությունն ուղղված է տեսական կրթությանը: Աշխարհայացքի զարգացումը ձևավորվում է գործնական աշխատանքների օգնությամբ, դիտումների և շրջակա բնության առարկաների հետ փոխգործակցության անձնական փորձի միջոցով: Միայն տեսական նյութի հետ ծանոթությունը, համացանցում շրջելը, հեռուստատեսային հաղորդումներ դիտելը չեն կարողանում լիարժեք ձևավորել մարդու պրակտիկ հայացքները: Աշխարհայացքը անհատի գիտակցության մեջ ձևավորվում է ձեռք բերված գիտելիքների գործնական կիրառումից, արժեքային համակարգից և հմտությունների տիրապետումից հետո:

Հիմնական դպրոցում բնապահպանական կրթության իրականացման հիմնական ձևը դպրոցական պարապմունքն է: Այնուամենայնիվ, դասի սահմանափակ ժամկետը և բավականին կոշտ ծրագրի առկայությունը ուսուցչին հնարավորություն չեն տալիս ամբողջությամբ փոխանցել անհրաժեշտ գիտելիքները և, առավել ևս, բնապահպանական ուղղվածության գործնական հմտությունները: Դպրոցում բնապահպանական կրթությունը հիմնականում կառուցված է միայն մի քանի ուսուցիչների ցանկության և ոգևորության վրա, ովքեր շատ դեպքերում իրենց գործունեությունը իրականացնում են արտադասարանական աշխատանքներում: Հեռու չէ ժամանակը, երբ այսօրվա երեխաները կդառնան չափահաս, և մեր հասարակության կյանքի, ողջ Երկրի ճակատագրի համար պատասխանատվությունը կընկնի նրանց ուսերին: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է նրանցից յուրաքանչյուրի մեջ սերմանել բնության հանդեպ սիրո զգացում, հարգանք բոլոր կենդանի արարածների նկատմամբ, բնության մեջ իրենց պահվածքի հետևանքները կանխատեսելու կարողություն: Մարդուն անհրաժեշտ են նոր գիտելիքներ, նոր արժեհամակարգ, որոնք, իհարկե, մանկուց պետք է ստեղծել ու կրթել: Մանկուց պետք է սովորել ապրել բնության, նրա օրենքների ու սկզբունքների հետ ներդաշնակ: Երեխան պետք է հասկանա, որ բնության մեջ չկա ավելորդ բուսականություն, անպետք

միջատներ: Բնության մեջ ամեն ինչ ներդաշնակորեն փոխկապակցված է, շղթաներից մեկի խախտումը սպառնում է խախտել բնական հավասարակշռությունը:

Ուսուցման մեթոդները մանկավարժների և երեխաների համատեղ գործունեության եղանակներ են, որոնց ընթացքում ձևավորվում են գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորում, ինչպես նաև արտաքին աշխարհի նկատմամբ վերաբերմունքի ձևավորում: Երեխաների բնապահպանական դաստիարակության մեջ լայնորեն կիրառվում են ուսուցման հետևյալ մեթոդները՝ **տեսողական, գործնական և բանավոր**³:

Տեսողական մեթոդները ներառում են դիտում, նկարների դիտում, մոդելների ցուցադրում, ֆիլմեր, տեսանյութեր, շնորհանդեսներ: Տեսողական մեթոդները առավելագույնս համապատասխանում են հիմնական դպրոցի սովորողների ճանաչողական գործունեության հնարավորություններին, թույլ են տալիս նրանց ձևավորել վառ, կոնկրետ պատկերացումներ բնության մասին:

Գործնական մեթոդներն են խաղերը, տարրական փորձերը և սիմուլյացիաները: Այս մեթոդների կիրառումը թույլ է տալիս մանկավարժին պարզաբանել երեխաների գաղափարները, խորացնել դրանք՝ կապեր հաստատելով առանձին առարկաների և բնական երևույթների միջև, ձեռք բերած գիտելիքները ներմուծել համակարգ և հիմնական դպրոցի սովորողներին վարժեցնել գիտելիքները կիրառելու գործում:

Խաղը կարելի է հաջողությամբ կիրառել դպրոցականների հետ արտադասարանական աշխատանքում և դիտարկել որպես բնապահպանական կրթության ձև ու մեթոդ: Խաղերը նպաստում են ուսումնասիրված նյութի հաջող յուրացմանը, ձևավորում թիմային աշխատանքի հմտություններ: Կրթության և դաստիարակության խաղային ձևերը (մրցակցային, դերախաղ) նպաստում են էկոլոգիական մտածողության զարգացմանը, մեծացնում հետաքրքրությունը բնապահպանական խնդիրների նկատմամբ, ձևավորում՝ դրական վերաբերմունք բնության նկատմամբ:

Բանավոր մեթոդները ուսուցչի և երեխաների պատմություններն են, բնության մասին արվեստի գործեր կարդալը, զրույցները: Բնության մասին երեխաների գիտելիքները ընդլայնելու, դրանք համակարգելու և ընդհանրացնելու համար

³ Кучер Т.В. Экологическое воспитание учащихся /Т.В. Кучер. М.: Наука, 1990. с. 29.

օգտագործվում են խոսքային մեթոդներ: Բանավոր մեթոդներն օգնում են երեխաների մոտ ձևավորել էմոցիոնալ դրական վերաբերմունք բնության նկատմամբ:

Երեխաների էկոլոգիական կրթության վերաբերյալ աշխատանքում անհրաժեշտ է համալիրում կիրառել տարբեր մեթոդներ, ճիշտ համատեղել դրանք միմյանց հետ: Մեթոդների ընտրությունը և դրանց ինտեգրված կիրառման անհրաժեշտությունը որոշվում է երեխաների տարիքային հնարավորություններով, դաստիարակության և դաստիարակչական առաջադրանքների բնույթով, որոնք լուծում է ուսուցիչը:

Բնապահպանական խնդրի ձևավորման փուլում առանձնահատուկ դեր են ձեռք բերում սովորողների ինքնուրույն գործունեությունը խթանող մեթոդները: Առաջադրանքները և խնդիրները ուղղված են հասարակության և բնության փոխազդեցության հակասությունների բացահայտմանը: Քննարկումները խթանում են ուսումնական գործունեությունը՝ նպաստելով խնդիրների նկատմամբ սովորողի անձնական վերաբերմունքի դրսևորմանը, տեղական իրական միջավայրի պայմաններին ծանոթանալուն և դրանց լուծման ուղիների որոնմանը: Մի շարք մեթոդներ ունեն համընդհանուր նշանակություն, օրինակ՝ քանակական փորձը (շրջակա միջավայրի երևույթները բնութագրող արժեքների, պարամետրերի չափման փորձեր, բնապահպանական տեխնիկայի, տեխնոլոգիաների փորձարարական ուսումնասիրություն և այլն) թույլ է տալիս հաջողությամբ ձևավորել բնապահպանական գիտելիքների կառուցվածքային տարրերը և վերաբերմունքը:

ԳԼՈՒԽ 2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

2.1 Բնապահպանական կրթության և դաստիարակության բովանդակությունը հիմնական դպրոցում

Բնապահպանական դաստիարակությունն անձի ձևավորման կարևորագույն բաղադրամասն է, որի հիման վրա անձը կրթվում և դաստիարակվում է շրջակա միջավայրի նկատմամբ ունեցած ճիշտ վերաբերմունքի պահանջներով: Էկոկրթական խնդիրներին համալիր լուծում տալու նպատակով, նախկին խորհրդային պետություններից առաջինը Հայաստանն է ընդունել «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքը⁴: 2009 թ. ՀՀ կառավարության թիվ 47 արձանագրային որոշմամբ հաստատվել է «Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի ստեղծման» հայեցակարգը:

2009 թ. հունիսի 10-ին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը հանրակրթության սկզբունքների թվում սահմանում է նաև աշակերտների մոտ բնապահպանական աշխարհայացքի ձևավորում: Բնապահպանական կրթության վերաբերյալ պահանջները տարածվում են նաև ֆիզիկական, մտավոր և հոգեկան զարգացվածության թերություններ ունեցող անձանց համար կազմակերպվող հանրակրթության վրա: ՀՀ կրթության և գիտության նախարարությունն աշակերտների շրջանում էկոլոգիական կրթության կազմակերպման և այդ բնագավառում նրանց գիտելիքների և իրազեկվածության բարձրացման նպատակով հանրակրթության ոլորտում իրականացվում է մի շարք ծրագրեր, որոնցից կարևոր է համարվում՝ հիմնական դպրոցում էկոլոգիական կրթության և դաստիարակության կազմակերպումը:

Անձի ձևավորման գործընթացում բնական միջավայրը և անձի ակտիվությունը որոշում են նրա գործունեության բնույթը և «մարդ-բնություն-հասարակություն» փոխազդեցության օրնաչափությունները: Այդ պատճառով առաջնային են համարվում սովորողի անձի ակտիվությունը, պահանջունքա-դրդապատճառային ոլորտը, որոնք

⁴ «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-264, ՀՀՊՏ 2001.1225/41(173):

պայմանավորում են սովորողի էկոլոգիապես նպատակահարմար գործունեությունը, էկոբարոյական վարքագիծը⁵:

Կրթության սոցիալ-էկոլոգիական գործառույթի, հասարակության կողմից կրթական համակարգերին տրվող սոցիալական պատվերի իմաստավորումը ուսուցչին հնարավորություն է տալիս ձևակերպելու այն որպես հասարակության մեջ էկոլոգիական մշակույթի և էկոլոգիական դաստիարակության վերարտադրում, անձի էկոլոգիական գիտակցության ձևավորում: Այդ սոցիալ-էկոլոգիական նոր գործառույթի իրականացումը ուսուցչի կողմից աշակերտին դարձնում է մշակույթի նոր բաղադրամասի՝ էկոլոգիական գիտակցության ձևավորման կենտրոնացման օղակը:

Բնության պահպանության գաղափարները պետք է ներգրավվեն բոլոր ուսումնական առարկաներում: Այսօր նշանակալիորեն էկոլոգիականացվել են դպրոցում դասավանդվող բոլոր բնագիտական և կենսաբանական առարկաները (բնագիտությունը, կենսաբանությունը, աշխարհագրությունը, քիմիան, ֆիզիկան և այլն): Նրանց հիմնախնդիրը վերաբերում է կենդանի համակարգերի վրա միջավայրի տարբեր արտաքին գործոնների ազդեցության պայմաններին և հետևանքներին, շրջակա միջավայրի ուսումնասիրմանը, բնական պաշարների ռացիոնալ օգտագործմանը, պահպանմանն ու վերափոխմանը, բնակչության և տնտեսության ճիշտ տեղաբաշխմանը, մարդու գործունեության բոլոր հնարավոր հետևանքների կանխատեսմանը և այլն: Ուսուցիչը պետք է իմանա, թե ինչու որոշ երեխաներ բնությանը վերաբերվում են մեծ հետաքրքրությամբ և սիրով, բացասական արարքներ չեն կատարում, իսկ մյուսները իրենց բոլորովին այլ կերպ են դրսևորում: Ուսուցչի խնդիրն է, որ սովորողները հասկանան բնության և անձի ստեղծագործական ունակությունների միջև եղած կապերը, դրանց փոխհարաբերության բնույթը, որոնց վրա մինչ այժմ կրթության ու դաստիարակության տեսության մեջ և պրակտիկայում բավարար չափով ուշադրություն չի դարձվել:

Դեռահասության տարիքում բավականին բարձր է բնության մեջ պատճառահետևանքային կապերի, բնության հուզագեղագիտական ընկալումը:

⁵ Կարապետյան Ն.Չ., Սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության առանձնահատկությունները հիմնական դպրոցում, Երևան, 2014, էջ 11:

Հատկապես 5-9-րդ դասարանների աշակերտների ուսումնական գործունեության մեջ բնությունը հանդես է գալիս որպես իմացության առարկա, որտեղ ընթանում է էկոլոգիական հասկացությունների, էկոլոգիական գիտելիքների յուրացման գործընթացը: Միջին դասարաններում էկոլոգիական կրթության կարևոր նպատակը՝ բնության ամբողջականության գաղափարի ըմբռնումն է: Բնության մեջ գործող կապերի իմացությունը կարևոր է որպես ճիշտ աշխարհընկալման հիմք:

Միջին դասարաններում էկոլոգիական կրթության խնդիրներն են՝

- դպրոցականների էկոլոգիական գիտակցության և կուլտուրայի ձևավորում,
- բնության և հասարակության փոխազդեցության մասին եղած բնագիտական, աշխարհագիտական, հասարակական, տեխնիկական, բարոյախրավական հասկացությունների յուրացում,
- բնության հետ շփվելու պահանջմունքի ձևավորում և գեղագիտական պահանջմունքի բավարարում,
- բնապահպանական, բնաճանաչողական ընդունակությունների զարգացում՝ պարտքի և պատասխանատվության, խղճի զգացմունքների ձևավորում,
- դպրոցականների մոտ էկոլոգիական հարցերի վերաբերյալ անհրաժեշտ ունակությունների և հմտությունների մշակում և այլն:

Էկոլոգիական կրթության ճիշտ դրվածք ապահովելու համար անհրաժեշտ է դասագործընթացում օգտագործել բոլոր միջառարկայական կապերը՝ աշակերտներին ցույց տալու համար գիտելիքների միասնականությունը, բնության գեղեցկությունը, նրա առողջարար ու գործնական նշանակությունը, նրանց մեջ արթնացնել բնությունը պահպանելու ցանկություն՝ որպես կենսապահովման, գեղեցկության, երջանկության, ներշնչման աղբյուր, որպես մարդու գոյության հիմնական և միակ միջոց:

Միջառարկայական կապերով հնարավոր է ամբողջությամբ և բազմակողմանիորեն լուսաբանել բնության և հասարակության փոխհարաբերության գիտական հարցերի բովանդակությունը, կազմակերպել սովորողների բնապահպանական տարաբնույթ պրակտիկ գործունեություն⁶:

⁶ Սաստրյան Լ.Թ., Էկոլոգիական դաստիարակության հիմունքները, Երևան, 2009, էջ 51:

Ուսուցչի խնդիրն է կառավարել դպրոցականների բնության ճանաչմանը և ընկալմանը նպատակաուղղված պատկերավոր և տեսական մտածողության տարբեր մակարդակների անհատական գործընթացը:

Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է պատկերացում ունենա ուսումնական ծրագրերի էկոլոգիական ներուժի մասին: Դա առկա է հայ գրականության, բնության, բնագիտության, կենսաբանության, աշխարհագրության, քիմիայի, ֆիզիկայի առարկայական ծրագրերում: Հատկապես այն առավել ընդգրկուն բնույթ է կրում միջին դասարանների բնագիտական առարկաների բովանդակության մեջ, որտեղ արձարձված էկոլոգիական խնդիրները հանդես են գալիս որպես գիտելիքների հատուկ ձև, սոցիալական նոր իրականություն:

Սովորողների կողմից էկոլոգիական իրավունքի գիտակցումը ներառում է շրջակա միջավայրի մեջ իր վարքագծի ճիշտ դրսևորման, բնության, սոցիալ-տնտեսական, գեղագիտական և հոգևոր արժեքների գիտակցման, բնությունը որպես ազգային հարստություն ընկալելու ու նրա օգտագործման ուղղությամբ իր իրավունքների և պարտականությունների իմացության հարցերը:

Էկոլոգիական կրթությունը դպրոցում պետք է իրականացվի բնագիտական ցիկլի առարկաների բազայի վրա և շարունակական բնույթ կրի սկսած տարրական դպրոցից և շարունակվի հիմնական և ավագ դպրոցներում: Օրինակ՝ 5-9-րդ դասարանների դեռահասների հետ տարվող աշխատանքներում ուսուցիչների գործունեությունը պետք է ուղղված լինի նրանց մեջ շրջակա միջավայրի պահպանման պահանջմունքի բացակայությամբ՝ պայմանավորված հնարավոր հետևանքների կանխատեսման կարողությունների ձևավորմանը, բնական պաշարների, հումքի, էներգիայի ռացիոնալ օգտագործման սովորույթի ամրապնդմանը և այլն:

Դեռահաս դպրոցականների էկոլոգիական մշակույթի ձևավորմանը նպաստում են տարբեր արտաուսումնական, արտադպրոցական խմբակների, ցուցահանդեսների, էկոլոգիական-հայրենագիտական արշավների, բնապահպանական աշակերտական ընկերությունների մասնակցությունը:

Ուսուցչի խնդիրն է կառավարել դպրոցականների բնության ճանաչմանը և ընկալմանը նպատակաուղղված պատկերավոր և տեսական մտածողության տարբեր մակարդակների անհատական գործընթացը:

Հիմնական դպրոցում էկոլոգիական կրթության բովանդակությունը իրականացվում է ոչ միայն բնություն, բնագիտություն, կենսաբանություն առարկաների, այլ նաև աշխարհագրություն, կերպարվեստ, ֆիզիկա, քիմիա, երգեցողություն, տեխնոլոգիա գրականություն առարկաների միջոցով:

Հիմնական դպրոցում էկոլոգիական կրթության և դաստիարակության արդյունավետ կազմակերպման համար առավել արդյունավետ և կիրառական են հետևյալ մեթոդները՝ զրույց, բանավեճ, պատմում, ինտերակտիվ քննարկումներ, ինքնուրույն աշխատանքներ, էկոլոգիական ուղղվածության առաջադրանքներ, էկոլոգիական իրավիճակների մոդելավորումներ, դերային խաղեր, ուսումնահետազոտական նախագծեր: Գործնականորեն օգտակար, արդյունավետ են ցուցադրական մեթոդները, ինչպես նաև վեբ տեխնոլոգիաների նպատակային կիրառումը:

Հիմնական դպրոցում էկոլոգիական կրթության և դաստիարակության առավել արդյունավետ մեթոդ է բանավեճը: Բանավեճի թեմայի ընտրության ժամանակ հաշվի է առնվում սովորողի էկոլոգիական գիտելիքների յուրացվածության մակարդակը, ակտիվությունը, դրդապատճառների ձևավորվածությունը: Բանավեճի հիմնական նպատակն է նպաստել սովորողների ինքնուրույնության, ճանաչողական հետաքրքրությունների, և էկոլոգիապես անվտանգ պրակտիկ գործունեության խթանմանը:

Էկոլոգիական բովանդակությամբ խաղի պլանավորումը ենթադրում է՝ որոշակի իրավիճակում բնապահպանական և բնօգտագործման փորձի յուրացումը: Խաղը ընդգրկում է մի քանի փուլեր՝ նպատակադրում, պլանավորում, իրականացում արդյունքների վերլուծություն: Խաղը ուղղված է էկոլոգիական տարբեր խնդիրների քննարկմանը՝ փոխներգործության ու երկխոսության պայմաններում: Էկոլոգիական խաղը նպաստում է էկոլոգիական գիտելիքների ամրապնդմանը և ձևավորմանը, էկոլոգիական, ազգային, մշակութային արժեքների ինտեգրմանը: Էկոլոգիական կրթության և դաստիարակության ընթացքում ուսուցիչը պետք է հասկանա տվյալ իրադրության ժամանակ մեթոդների արդյունավետ համադրման անհրաժեշտությունը:

Ներկայացնենք 9-րդ դասարանում «Կենսաբանություն» առարկայից անցկացվող դասի մեկ պլան՝ «Ջրոլորտի էկոլոգիական հիմնախնդիրները: Սևանա լճի հիմնախնդիրը: Ջրային պաշարների պահպանություն: Հողերի աղտոտում»⁷ թեմայով:



Նկար 1. Սևանա լիճ

Ուսուցման միջավայրը

Դասապրոցեսը կազմակերպվում է ուսումնական դասասենյակում, որտեղ առկա են համացանցին միացված համակարգիչ, պրոյեկտոր: Համակարգչում առկա է դասապրոցեսի կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր ուսումնական ծրագրերն ու նյութերը, օրինակ՝ Սևանա լճի մասին պատմող փոքրիկ տեսանյութ: Էկոլոգիայի կազմակերպման գործում առանձնահատուկ նշանակություն ունի նաև բնական միջավայրը, որին կարող ենք սովորողները ծանոթանալ էքսկուրսիայի միջոցով:

Կապը մյուս առարկաների հետ՝ էկոլոգիական շատ խնդիրներ, հատկապես տեխնածին, անթրոպոգեն խնդիրները հասկանալու և դրանց լուծումներ առաջարկելու համար կարևոր է ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության իմացությունը, իսկ ՏՀՏ միջոցների կիրառման և ինտերնետի շնորհիվ սովորողը ստանում է տեղեկատվություն, ձեռք է բերում գիտելիքներ և հմտություններ, որոնք նա կարող է կիրառել էկոլոգիական նոր ուսումնական նյութեր պատրաստելիս:

⁷ Կենսաբանություն: Ընդհանուր օրինաչափություններ: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 9-րդ դասարանի համար: Մաս 2/ Տ. Թագմանյան, Ջ. Սաֆարյան. – Եր.: «Զանգակ» հրատ., 2019, էջ 153-154:

Սովորողներին ուղղված պահանջներ

Սովորողները պետք է աշխարհագրություն առարկայից արդեն ծանոթ լինեն Սևանա լճի էկոլոգիական հիմնախնդրի հետ, փորձեն վերլուծել առաջացման պատճառները:

Սովորողի ուսումնական գործունեության ձևերը

- ուսումնական նյութի բացատրում, լուսաբանում,
- ինքնավերլուծություն, գրույցներ, հարցազրույցներ տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչների հետ,
- զանգվածային լրատվամիջոցներից ստացված տեղեկատվության վերլուծություն,
- հաշվետվությունների ու գրավոր հաղորդումների պատրաստում,
- մասնակցություն կլոր սեղանների,
- թեստային աշխատանքների ու ստուգաթղթի անցկացում,
- աշխատանք վիրտուալ գրադարաններում,
- ուսումնահետազոտական աշխատանքների իրականացում:

Ուսումնական ճամփորդություններ: Այցելություններ էկոլոգիական հիմնախնդիրների գոտիներ, այս դեպքում՝ Սևանա լիճ:

Դասի կազմակերպումը

Նախատեսվում է դասընթացը կազմակերպել ակտիվ ուսուցման մեթոդներով: Հիմնական նյութը սովորողների կողմից յուրացվում է դասի ընթացքում: Դասի կազմակերպման հիմնական ձևերը տեսական և գործնական պարապմունքներն են: Համապատասխան թեման կարող է տրվել առարկայական առանձին մոդուլների միջոցով: Սովորողները որպես առաջադրանքներ կատարում են ուսումնահետազոտական աշխատանքներ և ուսումնասիրություններ Սևանա լճի էկոլոգիական թեմայով:

Ուսուցման ձևերից են նաև արտադասարանական աշխատանքները, միջոցառումները, էքսկուրսիաները և արշավների կազմակերպումը դեպի Սևանա լիճ:

Գնահատում: Սովորողի գնահատումը կատարվում է ըստ իրականացված նախագծերի: Նախագծերի վերջնական արդյունքը սովորողը տեղադրում է իր բլոգում, որից հետո հղումը ուղարկում է դասավանդողին:

Տնային առաջադրանք: «Հողի էրոզիա» թեմայով աշակերտները տանը պետք է պատրաստեն զեկուցումներ հետևյալ թեմաներով՝

- ✓ Ռելիեֆի դերը էրոզիայում,
- ✓ Կլիմայի դերը էրոզիայում,
- ✓ Մթնոլորտային տեղումները,
- ✓ Չյունածածկույթի դերը էրոզիայում,
- ✓ Քամիների դերը էրոզիայում,
- ✓ Բուսական ծածկույթի դերը քայքայման գործում,
- ✓ Մարդ գործնի դերը հողի քայքայման գործում:



Նկար 2. Հողի էրոզիա

Այսպիսով, էկոլոգիական բովանդակությամբ նյութերի յուրացման համար նպատակահարմար է կիրառել ուսուցման տարբեր մեթոդների համատեղում, որի նպատակը խմբային քննարկումների, դերային խաղերի, միջոցով հասնել հաղորդվող նյութի հիմքային ընկալմանը, գիտելիքների ձևավորմանը, կարողությունների և հմտությունների զարգացմանը՝ կիրառելով աշակերտակենտրոն ուսուցում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանական դաստիարակությունը և կրթությունը, գիտելիքների ստացումը, բնապահպանական մտածելակերպի, աշխարհայացքի ձևավորումը սկսվում է դպրոցից: Սովորողը պետք է իմանա բնական պաշարների, դրանց անխնա օգտագործման վնասի մասին: Գաղափար ունենա բնական միջավայրի աղտոտման աղբյուրների, քիմիական արտադրությունների վնասակար ազդեցությունների մասին:

Էկոլոգիական կրթությունը և էկոլոգիական մշակույթի դեռահասների դաստիարակությունը հասարակության առջև կանգնած գլխավոր խնդիրներից մեկն է: Որպեսզի խուսափենք էկոլոգիայի վրա անցանկալի ազդեցություններից, որպեսզի չարվեն էկոլոգիական սխալներ, որոնք վտանգավոր լինեն առողջության և կյանքի համար, ժամանակակից մարդը պետք է զինված լինի տարրական էկոլոգիական գիտելիքներով և նոր էկոլոգիական մտածողությամբ:

Էկոլոգիական շատ խնդիրներ հասկանալու և դրանց լուծումները առաջարկելու համար կարևոր է ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության իմացությունը, իսկ ՏՀՏ միջոցների կիրառման շնորհիվ սովորողը ստանում է տեղեկատվություն, ձեռք է բերում գիտելիքներ և հմտություններ, որոնք նա կարող է կիրառել էկոլոգիական նոր ուսումնական նյութեր պատրաստելիս:

Մարդկային հասարակության կարևորագույն խնդիրներից են բնության մեջ գոյություն ունեցող էկոլոգիական օրենքների իմացության հիման վրա բնության խելամիտ օգտագործումն ու պահպանումը: Բնությունը թեպետ ինքնավերականգնման հատկություն ունի, սակայն այն վերականգնելու և հասցված վնասները վերացնելու համար շատ ջանքեր են հարկավոր, և մարդը նույնպես պետք է դրան նպաստի իր ամենօրյա գործունեությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-264, ՀՀՊՏ 2001.1225/41(173):
2. Ասատրյան Լ.Թ., էկոլոգիական դաստիարակության հիմունքները, Երևան, 2009:
3. Ասատրյան Լ.Թ., էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները: Մենագրություն.- Երևան: «Արտագերս» հրատ., 2006:
4. Մարտիկյան Ո., Անձի էկոլոգիական կուլտուրան: Ձևավորման ուղիները և դաստիարակության ու կրթության միջոցները, Երևան, Արևիկ, 2005:
5. Ներկարարյան Ա., էկոլոգիական կրթության և դաստիարակության միջոցները և ուղիները դպրոցում, Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու, թիվ 3, Երևան, 2003:
6. Կարապետյան Ն.Զ., Սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության առանձնահատկությունները հիմնական դպրոցում, Երևան, 2014:
7. Կենսաբանություն: Ընդհանուր օրինաչափություններ: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 9-րդ դասարանի համար: Մաս 2/ Տ. Թագմանյան, Ջ. Սաֆարյան. – Եր.: «Զանգակ» հրատ., 2019:
8. Кучер Т.В. Экологическое воспитание учащихся /Т.В. Кучер. М.: Наука, 1990.